153. ՔԱՉԱԼԸ

Մին տղա կոխկե մին շենձ ախճիգյ ա օզում, նիշանվում։ Մին օր տա հղե յա ինո̈ւմ, վըեր քյինա̈ հներանց տոն։ Հղեննի մին քաչալ ա պըտահում, հրցընում ա, թա հիշտեղ ը՞ս քյինամ, տա ասում ա.—Քյինա̈մ ըմ հներանց։ Քա̈չալն ասում ա.—Ես էլ ըմ կյամ։ Էտ տղան թա քյինանք։ Քաչալը տրան սուվըրցընում ա, ասում ա.—Փըսացու վըս, քեզ ծանդր կըպահես, վըեր ըոըշներես հաց տինին, տու շատ օտեսվուչ, լոխ թաքուն կըքաշիս առաչըս։ Էտ տղան թա՝ լավ։ Վըեր քյինա̈մ ըն հներանց տոն, հինչ վըեր տինո̈ւմ ըն ըստոլեն, փըսացուն թաքուն քաշում ա քըշալեն առաչը։ Ետնան քաչալը փըսցուվեն սուվըրցընում ա, թա ասե, թող մըեր տըեղը կտրեն կլխեն, հո̈ւրթա̈ն մոտե քըցին։ Տի յել անում ըն։

Վըեր լոխ քունավ ըն հնցընում, քաչալը փսըցուվեն զո̈ւրթնըցընում ա, ասում.—Հո̈ւրթեն թուշավը, տանը մաչին էն ա լա̈վ եղ, մածուն, օրիշ շատ ուտելի պեններ կա, եք քեզ քյինդիրավ կապեմ, հո̈ւրթավը կախ տամ, քշաց առաչ եղը պոլիգյավը եր կալ պեր, ետնան էլ մնացած պենները։ Փըսացուն թա՝ հա՛։ Քաչալը տրան քյինդիրա̈ն կապում ա, հո̈ւրթա̈վը քըշըցընում, տա եղը յոր ա օնում, քաչալը քյինդիրա̈ն ծիքյ ա տամ, փըսըցուվեն տո̈ւս ենում,

Նորից քյինդիրան կապած քցում տոն։ Քաչալը էտ եղեն մալը ճոր ա ածում, խառնում, նորից քյինդիրան ծիգ տամ, փքաց-ցուվեն մաղնեն պուլիգը ծրնոքեն պիցիրցնում. վրեր հանում ա կնաը, քյինդիրին ճոնդը հղլակ ա անում, մին փադ քցում հղլակը, հուրթումը պընգրցընում, փրսացուն թողում օթան կախ իլած, եղը հուրթավը կլխեն ածում, ինքը փախնում։

Հրոհնացուն քշերավ զուրթնանում ա, կլխբյեր եշում, տրեսնում մինը հուրթան կախ իլած։ Փրսացուն վրեննան մինչև կլոխը նղավ ծակրված ա ինում, հրոհնացուն ճինանչում չի, կլոխն ան ծուլնեբը վրեր ա թակում, տընրհավա կրլխեն հրվաքում, թա հուրթան կախ իլած մին սև սադանա կա։ Տընրցեք լոխ հրվաքվում ըն, հինչ անում ըն, վրեր սադանան հուրթավը տուն կլա, քյինամ չի։ Դերին ծեն ըն տամ, վրեր կյա կյանձ կաբթի, հանցու սադանան հուրթավը տուն կյա քյինա։ Դերը կյամ ա, հիշքան կյանձ ա գյուղում, լոխ կաբթում ա, սադանան քյինամ չի։ Ետնան տուն կյալիս ասում ա.—Կրյեշիք տրեսնաք, թա սադանան սիպտակ ինի, կրսպանեք, թա սև ինի, պեց կթողեք քյինա։ Փրսացուն էտ խոսկը վրեր ըսկանում ա, ծրնոքեն մաղնեն պուլիգը հլաբում ա դերին կրլխեն ածում, դերը վրեննան մինչև կլոխը սիպտակում ա։ Հրվաքված մարթիք յիրա յրն տրեռնում, ամեքյա մին փադ, մին քար ծրոքրրնեն օնում, վրեր թակում դերին ըսպանում։ Փրսացուն էլ մին թաՀրավ քյինդիրավը սութ-սութ ընելավ մեքրեն պիցիրանում ա, հուրթավը տուն կյամ, փախնում քյինամ ուրանց շենը, ասում.—Ես էլ ընդրեղան ախմիգ չըմ օգրել։